TRANSPARENCY INTERNATIONAL
the global coalition against corruption

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2010

Հաճախակի տրվող հարցեր

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) *Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը* (այսուհետ՝ Բարոմետր) կոռուպցիայի մասին կարծիքների և դրանում ներքաշվածության վերաբերյալ համաշխարհային մասշտաբի հանրային կարծիքի միակ հարցումն է: Որպես ընդհանուր բնակչության հարցում, այն ծառայում է որպես ցուցանիշ այն բանի, թե ինչպես է դիտարկվում կոռուպցիան տվյալ երկրում և ինչպես են աշխարհում գնահատվում այն ջանքերը, որոնք ուղղված են այն սանձելուն: Այն նաև չափում է հարցվածների ներքաշվածության աստիճանը կոռուպցիոն գործարքներում:

2010 թ.-ի Բարոմետրը, որը հանդիսանում է թվով յոթերորդ հրապարակումը, արտացոլում է 86 երկրներում հարցված 91,781 անձանց կարծիքները, և ներկա դրությամբ այն ունի մինչ այժմ եղածներից առավել լայն ընդգրկում:

2. Ի՞նչպիսի հարցեր են ներառված հարցաթերթիկում:

Բարոմետրում ներառված են ընդհանուր հարցեր մարդկանց կողմից կոռուպցիայի ընկալման և կաշառատվության մեջ ներքաշվածության վերաբերյալ: Այն պարզում է, թե որ հաստատություններին են մարդիկ առավել շատ վստահում որպես կոռուպցիայի դեմ պայքարող հաստատությունների, և որքանով են նրանք հավատում կոռուպցիայի դեմ պայքարում իրենց երկրների իշխանությունների գործադրած ջանքերի արդյունավետությանը: Առաջին անգամ լինելով, 2010 թ.-ի Բարոմետրում ներառված են հարցեր՝ պարզելու համար, թե որքանով են հանրության առանձին անդամներն անձամբ կամենում ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարում:

Բարոմետրում ներառված հարցերը տարեցտարի փոփոխվում են, մեկընդմերթ կրկնվելով տարբեր տարիներին, և դրանով իսկ ապահովելով համեմատությունների անցկացումը:

3. **Ո՞վ և ե՞րբ է անցկացրել ներկա հարցումը:**

Բացառությամբ երկու երկրների՝ *2010 թ.-ի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի* հարցման անցկացումը ԹԻ-ն պատվիրել է Գելափ Ինթերնեշնլին: Այդ երկու երկրներն են Բանգլադեշը և Մոնղոլիան, որոնցից առաջինում հարցումն անցկացրել է ԹԻ-ի տեղական մասնաճյուղը, իսկ երկրորդում այն անցկացրել է Կոռուպցիայի դեմ պայքարի Մոնղոլիայի անկախ գործակալությունը:

Դաշտային աշխատանքները իրականացվել են 2010 թ.-ի հունիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Կիրառվել են դեմ առ դեմ, հեռախոսային և օն-լայն (Ինտերնետով) հարցազրույցների մեթոդները:

4. **Ո՞ր երկրները/տարածքներն են ներառված 2010 թ. Բարոմետրում**

Այս տարվա Բարոմետրում ներառված է 86 երկիր. 2009 թ.-ին 69 երկիր էր: Չկա որևէ սահմանափակում հարցման մեջ երկրներ/տարածքներ ընդգրկելու հարցում: Եթե միջոցները թույլ տան, ապա ԹԻ-ն հուսով է, որ ապագայում էլ ավելի մեծ թվով երկրներ կընդգրկվեն հարցման մեջ:

5. **Ո՞ր երկրները/տարածքներն են հայտնվել 2010 թ.-ի Բարոմետրում, որոնք նախորդ 2009 թ.-ին այնտեղ չկային:**

Նոր երկրներ 2010 թ.-ի Բարոմետրում	Վերջին անգամ 2007 թ.-ին ընդգրկված երկրներ	Վերջին անգամ 2006 թ.-ին ընդգրկված երկրներ	Վերջին անգամ 2004 թ.-ին ընդգրկված երկրներ	Նախորդ տարվա ցուցակից երկրները, որոնք այս տարի չեն ընդգրկվել
Ավստրալիա	Ֆրանսիա	Ֆիջի	Աֆղանստան	Բրունեյ
Բանգլադեշ	Գերմանիա	Մեքսիկա	Բրազիլիա	Քուվեյթ
Չինաստան	Իռլանդիա	Թայվան	Լատվիա	Պանամա

Նոր Զելանդիա	Հարավաֆրիկյան Հանրապետություն			
Պապուա Նոր Գվինեա	Վիետնամ			
Սլովենիա				
Սողոմոնյան կղզիներ				
Վանուատու				

6. Ինչպե՞ս կարող են օգտագործվել Բարոմետրի արդյունքները:

Բարոմետրը հանդիսանում է կոռուպցիայի վերաբերյալ հասարակության կարծիքների և նրանում ներքաշվածության վերաբերյալ էմպիրիկ տվյալների հարուստ աղբյուր:

Հանրային քաղաքականություն մշակողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ ավելի լավ հասկանալու, թե ինչ չափով են տարբեր հաստատությունները և ծառայություններն ընկալվում որպես կոռումպացված, ընդլայնելու իրենց գիտելիքները մանր կաշառակերության ձևերի և հաճախականության վերաբերյալ և պարզելու դրանց ժողովրդագրական բաշխվածությունը: Առանձին երկրի մակարդակով 2010 թ. Բարոմետրը ներառում է այնպիսի տեղեկատվություն, որն օգտակար կլինի հանրային քաղաքականության բարեփոխումներ անցկացնելու, ինչպես նաև այն ոլորտներում հետազոտություններ իրականացնելու համար, որոնք հանրության կողմից համարվում են կոռումպացված:

Քաղաքացիական հասարակության կառույցները և լրագրողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ պարզելու, թե որ ոլորտներում է առկա կոռուպցիա, բարձրացնելու իրազեկությունը մեկ կամ մի քանի երկրներում առկա կաշառակերության տարածվածության վերաբերյալ և աջակցելու թիրախավորված այն փոփոխություններին, որոնք իրականացվում է որևէ կոնկրետ երկրում կամ ոլորտում:

Գիտահետազոտական ուսումնասիրություններ անցկացնողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ ուսումնասիրելու կոռուպցիային և

կաշառակերությանը նպաստող գործոնները և դրանց հետևանքները մեծ թվով երկրներում: Բարոմետրն առաջարկում է առանձին վերցված յուրաքանչյուր պետության վերաբերյալ իր ուղղվածությամբ և ընդգրկունությամբ աչքի ընկնող այնպիսի տվյալներ, որոնք այն կդարձնեն տվյալների եզակի աղբյուր ակադեմիական հանրության համար:

7. Համեմատելի ե՞ն, արդյոք, Բարոմետրի տարբեր տարիների տվյալները:

Այո: Եթե տարբեր տարիներին Բարոմետրում ներառված հարցերը կրկնվում են, ապա այն հնարավորություն է տալիս կատարել ժամանակային ուղղակի համեմատություններ: Ներկա Բարոմետրը թվով յոթերորդ հարցումն է, և հետևաբար հնարավորություն է տալիս գնահատել հանրության կողմից առավել կոռումպացված ընկալվող հաստատությունների, կոռուպցիայի դեմ պայքարում իշխանությունների ջանքերի արդյունավետության և որոշակի հանրային ծառայություններ ստանալու համար կաշառք վճարող քաղաքացիների չափաքանակների առումով միտումները:

8. Ի՞նչ տարբերություններ կան Բարոմետրի և ԹԻ-ի *Կոռուպցիայի ընկալման համաթվի* և ԹԻ-ի *Կաշառք վճարողների համաթվի* միջև:

Բարոմետրը հանդիսանում է հանրային կարծիքի ուսումնասիրություն, որը վեր է հանում ընդհանուր առմամբ հասարակության տեսակետները կոռուպցիայի և իրենց կյանքի վրա դրա ազդեցության, ներառյալ նաև կաշառատվության մեջ նրանց ներքաշվածության, մասին: Միևնույն ժամանակ և՝ *Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ)*, և՝ *Կաշառք վճարողների համաթիվը (ԿՎՀ)* վեր են հանում փորձագետների կարծիքները:

ԿԸՀ-ն արտացոլում է հանրային ոլորտում և քաղաքականության մեջ առկա՝ կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացված դիտորդների կարծիքը: Չնայած այս տարբերություններին, բոլոր տարիներին էլ, երբ միաժամանակ անցկացվել են այս երկու հարցումները, ի հայտ է եկել զգալի փոխկապակցվածություն նրանց տվյալների միջև: